DEBUT 2009 YEREVAN

ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԵՐԳԻՉՆԵՐԻ
ՄՐՑՈՒՅԹ

Armjazz.Net

CITY FM 106.0
մեր քաղաքի ռադիոն

club Chameleon

Մրցույթի նպատակն է բացահայտել, աջակցել և հանրային ճանաչում բերել տաղանդավոր սկսնակ երգիչներին, որոնք իրենց պրոֆեսիոնալ գործունեության առաջին քայլերն են նախաձեռնում:

Մրցույթին կարող են մասնակցել բոլոր սկսնակ վոկալիստները, ովքեր երգում են **ջազ, ջազ-ռոք, սոուլ, բլյուզ, ռիթմ-ն-բլյուզ, ֆանք, էթնո-ջազ, ավանգարդ-ֆոլկ, ուորլդ ֆյուժն և հարակից ժանրերում:**
Մասնակցության հայտի ձև կարելի է ձեռք բերել Սիթի ՖՄ Ռադիոկայանից՝ Հյուսիսային Պողոտա 1, Նորդ Բիզնես Կենտրոն, 9-րդ հարկ հասցեում, Հեռախոս՝ 010 538058, 010 538087: Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2009 թ.-ի ապրիլի 10-ն է:

ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼ

Հայտնի երաժշտական պրոֆեսիոնալներից բաղկացած ժյուրին կգնահատի բոլոր ստացված հայտերը, կլսի մասնակիցներին և կիսաեզրափակիչ փուլի համար կներկայացնի տասը մասնակցիների թեկնածություններ:

Ընտրական փուլի լսումները տեղի կունենան Սիթի ՖՄ Ռադիոկայանի «Ակուստիկ Սրճարանում»: Մասնակիցներից ակնկալվում է կենդանի կատարմամբ ներկայացնել 2-3 ջազային (կամ հարակից ժանրի) ստանդարտ իրենց հայեցողությամբ՝ «մինուսային» ֆոնոգրամայի կամ դաշնակահարի ուղեկցությամբ, հնարավոր է նաև ակապելա կամ սեփական նվագակցությամբ:

ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ

Կիսաեզրափակիչ փուլի համար ժյուրիի կողմից ընտրված տասը մասնակիցները պետք է ներկայացնեն կազմակերպիչների առաջարկած երգացանկից երկուական ջազային (կամ հարակից ժանրերի) ստանդարտ ստեղծագործություններ:

Մասնակիցները հնարավորություն կունենան նախապատրաստվել իրենց ելույթներին պրոֆեսիոնալ երաժիշտների, երաժշտագետների և վոկալի ուսուցչի հետ:

Կիսաեզրափակիչ փուլի լսումները տեղի կունենան **«ՔԱՄԵԼԵՈՆ» ակումբում 2009 թ.-ի մայիսի 7-ին՝** պրոֆեսիոնալ երաժիշտների նվագակցությամբ համերգի ձևաչափով՝ հանդիսատեսի ներկայությամբ: Համերգին ներկա կլինեն նաև **զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, հանրաճանաչ երաժիշտներ և երաժշտագետներ, պրոդյուսերներ, նախագծի գործընկերներ, պատվավոր հյուրեր:** Ժյուրին կգնահատի ելույթները և առավելագույն ձայներ ստացած չորս մասնակիցներ և հանդիսատեսի համակրանքին արժանացած ևս մեկը կանցնեն մրցույթի եզրափակիչ փուլ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ

Եզրափակիչը նույնպես տեղի կունենա **«ՔԱՄԵԼԵՈՆ» ակումբում 2009 թ.-ի մայիսի 16-ին՝** կիսաեզրափակիչի ձևաչափով:

Եզրափակիչի պարտադիր ծրագրի մեջ, ի հավելումն երկուական ստանդարտ ստեղծագործությունների, մասնակիցները կներկայացնեն նաև որևէ հայկական երաժշտական ստեղծագործություն՝ ուրույն ջազային մեկնաբանությամբ:

---

[1] **Մրցույթի պայմանների և մասնակցության հայտի լեկտրոնային տարբերակը ստանալու համար անհրաժեշտ է info@cityfm.am էլեկտրոնային փոստին ուղղարկել նամակ նշելով "DEBUT" բառը նամակի վերնագրում ("subject"):**

DEBUT 2009 YEREVAN
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԳԻՉՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Մրցույթի գլխավոր մրցանակը՝ **«ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԵԲՅՈՒՏ»** կհանձնվի ժյուրիի անդամների առավելագույն ձայները ստացած մասնակցին:

Երևանյան ՖՄ Ռադիոկայանների տնօրեններից և պրոդյուսերներից կազմված հատուկ ժյուրին կհանձնի Սեդրակ Դավիդյանի անվան **«ԳԵՂԵՑԻԿ ԴԵԲՅՈՒՏ»** մրցանակը եզրափակիչի ամենաինքնատիպ մասնակցին:

Նախատեսվում են Հատուկ մրցանակներ կազմակերպիչների և նախագծի գործընկերների կողմից:

Մրցանակակիրներին հնարավորություն կտրվի ձայնագրելու կենդանի համերգ **Սիթի ՖՄ-ի «Ակուստիկ Սրճարանում»**՝ ուղիղ եթեր հեռարձակելու հնարավորությամբ:
Նախատեսվում է նաև թողարկել ձայներիզներ **«ԴԵԲՅՈՒՏԻ»** համերգների ամենահաջողված հատվածներից:
Նախագիծը լայնորեն կլուսաբանվի զանգվածային լրատվության միջոցներով: Նախագծի մեկնարկը կտրվի մամուլի ասուլիսով, **«ԴԵԲՅՈՒՏԻ»** մասին պատմող 1 ժամ տևողությամբ տեսաֆիլմը և եզրափակիչ համերգը կհեռարձակվի հայաստանյան որևէ առաջատար հեռուստատեսությամբ:

Նախագծի կազմակերպիչները և գործընկերները պատրաստակամորեն կաջակցեն «ԴԵԲՅՈՒՏԻ» մրցանակակիրների պրոֆեսիոնալ առաջընթացին՝ օգնելով վերջիններիս ինքնաբացահայտվելու և հանրային ճանաչում ստանալու համար՝ ներգրավելով անհրաժեշտ զանգվածային լրատվամիջոցների:

ArmJazz.Net

CITY FM 106.0 մեր քաղաքի ռադիոն

Jazz club Chameleon

DEBUT 2009 YEREVAN
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԳԻՉՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ